

Թիֆլիսի հայուհյաց  
բարեգործական ընկերությունը  
և Մարիամ Խասիսյանի  
հանրաշահ գործը

Արփի Մանուսյան

# Թիֆլիսի հայուհյաց բարեգործական ընկերությունը և Մարիամ Խասիսյանի հանրաշահ գործը

18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի Եվրոպայում բուրժուական հանրային ոլորտը կայանում էր ֆադաֆային միջին և բարձր խավի տղամարդկանց հանրային-ֆադաֆական, մշակութային ակտիվ գործունեությամբ: Բուրժուա տղամարդու սոցիալական և մշակութային գերիշխանությունը հանրային ոլորտում անառարկելի էր: Տարաբաժանված մասնուլի՛ն՝ հանրային, և ֆեմինին՝ մասնավոր-ընտանեկան ոլորտների սահմանները սկսեցին լողովել արդեն 19-րդ դարի սկզբներից, սակայն հայրիշխան և տղամարդկային հասարակարգի պահպանության և վերաբարձրության համար կարևոր էր, որ «կանացի» կարողությունները, հմտությունները և արժանիքները այնպես ծառայեին կրթական, մշակութային, սոցիալական, լայն իմաստով՝ հանրային բարիքի ստեղծման գործին, որ այդ կանայք չդառնային հանրային կերպարներ՝ զանցառելով կանանց դերի տղամարդաստեղծ սահմաններն ու պակասարժեքները:

Վյուսմանցայնիվ, կնոջ կրավորական դիրքի հեզհեզ հաղթահարումը, հանրային կյանքում նրա վերելքը, հազվադեպ նաև՝ մասնուլի՛ն սոցիալական կառուցվածքների ճեղքումը այս շրջանում անխուսափելի դարձան ինչպես Եվրոպայում, այնպես էլ Եվրոպական լուսավորականության գաղափարներով ազդված և տոգորված Ռուսական կայսրության կենտրոնում և դրա ծայրագավառներում՝ նյութականաճալով հիմնականում աղֆասախնամ, կրթական-բարեգործական աշխատանքի միջոցով:

Ժամանակի աղֆասախնամ գործունեությունը և բարեգործությունը ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ռուսական կայսրությունում հենված էին ֆրիսոնեական բարոյականության սկզբունքների վրա: Իր «Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում» գրքում Լեոն գրում է.

*«Քրիստոնեությունը, ինչպես յայտնի է, աղֆասների և անկարողների խնամելու գործը առաջնակարգ պարտավորություններից մեկը դարձրեց իրան հեռուների համար: Եւ ֆրիսոնեական մոտեքը Հայաստան իր առաջին իսկ ֆայլերից հանդէս է բերում աղֆասներին խնամելու գործը»*  
(Լեոն, 1911, 1):

«Ասիականությունը և հին հավատք դեռն նեսած» Հայաստանը, ըստ Լեոնի, հեզհեզ հաղորդակից էր դառնում Եվրոպական ֆադաֆակրթությանը, այդ թվում՝ բարեգործության միջոցով:

Լեոն միաժամանակ առանձնացնում է այն նպաստավոր ֆաղափարան համասեփսքը և ժամանակահատվածը, որոնք խթանում էին հանրաշահ գործունեությունը Արևելահայաստանում: 1877-1883 թվականների ընթացքում, ինչպես նշում է Լեոն, թուրքահայերի դրության հարցը լարել էր հայերի ուժերը՝ առաջ բերելով բեղուն գործունեություն թե՛ ուսսահայերի, թե՛ թրքահայերի շրջանում ամենօրյա մանուկի, գրականության և թատրոնի միջոցով: Այս շրջանում հիմնադրվում են Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը, Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերությունը, Թիֆլիսի հայուհյաց բարեգործական ընկերությունը (Լեո, 1911):

1.Ֆրիդրիխ Ֆրյոբելը (1782-1852) գերմանացի մանկավարժ է, որի կրթական մոտեցումները խորսխված էին երեխաների առանձնահատուկ կարողություններն ու կարիքները հաշվի առնելու մեթոդաբանության վրա: Նա ձևակերպել է «մանկապարտեզի» (Kindergarten) գաղափարը, ինչպես նաև կրթական խաղալիքների, որոնք հայտնի են «Ֆրյոբելյան նվերներ» անունով: Ֆ. Ֆրյոբելի գործունեության և Ֆրյոբելյան մանկավարժական մեթոդաբանության մանրամասները տես՝ <http://www.froebelweb.org/> կայքում:

Այսպիսով՝ Արևելահայաստանում կանանց ստեղծած հասարակական-կրթական ընկերությունները մեկնարկեցին «Ֆրյոբելյան»<sup>1</sup> և «Թիֆլիսի հայուհյաց բարեգործական ընկերությունների» հիմնադրմամբ:

Ինչպես Արևելահայաստանում, այնպես էլ Մոսկվայում, Պետերբուրգում, Եվրոպական երկրների մշակութային օջախներում կրթությունը ստացած կանայք՝ Դարիա Յովհաննիսյանը, Թագուհի Մելիք-Ազարյանը, Սոֆիա Բաբայանը, Սրբուհի Երիցյանը, Սարիամ Լասիսյանը և շատ ուրիշներ,

հանձն են առնում աղջիկների դաստիարակության և կրթության գործը՝ 1879-ին նախաձեռնելով Թիֆլիսի հայ կանանց և օրիորդաց ժողով՝ հիմնադրելու բարեգործական կենտրոն, որը կօժանդակեր կարիքավոր աղջիկներին՝ ուսում ստանալու կամ արհեստ սովորելու և աշխատանք հայթայթելու: Թիֆլիսի հայուհյաց բարեգործական ընկերության կազմավորման շարժառիթը 1878 թվականին Պոլսում ստեղծված «Ազգանուէր Յայուհեաց Ընկերութիւնն» էր:


*«Յայոց մէջ կանանց առաջին Բարեգործական Ընկերութեան հիմնելու պատիւը պատկանում է Կ. Պոլսի հայուհիներին: Ուս-սանկական հաշտութեան հետ միաժամանակ, 1878 թ. Տանկասանի մայրաֆաղափում ծագումն առաւ «Ազգանուէր Յայուհեաց Ընկերութիւնը» (Société des dames Arméniennes «Askanever Hayouhyatz»): Ընկերութեան նպատակն էր բազմացնել Տանկական-Յայաստանում իզական տարական դպրոցների թիւը և այդ դպրոցների համար վարժուհիներ պատրաստել: ...Նամակներ գրեցին Թիֆլիզ իրանց ծանօթ հայուհեաց՝ s.s. Դարիա Յովհաննիսեանին, Թագուհի Մելիք-Ազարեանին, Սօֆիա Բաբայեանին և Սրբուհի Երիցեանին, խնդրելով սրանց բանալ Թիֆլիզում մի օժանդակ բաժանմունք՝ օգնելու իրանց ընկերութեանը թէ դրամական նուէրներով և թէ բարոյական գործակցութեամբ»<sup>2</sup>:*

2 Տասնամեակ Թիֆլիզի Յայուհեաց Բարեգործական Ընկերութեան. (1892). Թիֆլիզ, էջ 3:

1879 թ. դեկտեմբերի 4-ին Թիֆլիսի մի խումբ հայ կին մտավորականներ հավաք են կազմակերպում և ընթերցում Կ.Պոլսի հայուհյաց բարեգործական ընկերության անդամների նամակները և ուղարկված

– 3 Նույն տեղում, էջ 4:

– 4 Բնօրինակից թվայնացված կանոնադրությունը տե՛ս հոդվածի վերջում:



5 Տասնամեակ Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերության. (1892). Թիֆլիզ, էջ 5:

– 6 Նույն տեղում, էջ 7:

– 7 Նույն տեղում, էջ 8-9:

– 8 Նույն տեղում, էջ 24:

– 9 Նույն տեղում, էջ 24-25:

– 10 Նույն տեղում 11: Ընկերությունը պարբերաբար հրատարակում էր իր գործունեության տարեկան մանրակրկիտ հաշվետվություններ, ընդարձակ տեղեկագրեր, որոնք ամփոփում են Ընկերության ֆինանսական դրությունը, տալիս դրա գործունեության բովանդակային մանրամասներ, իսկ հավելված-ներդիրները պարունակում են Ընկերության կին անդամների անվանացանկերը:

– 11 Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերության բանեւիինգամեակը: 1882-1907. (1907). Թիֆլիզ, էջ 28:

կանոնադրությունը<sup>3</sup>: 1880 թ. ապրիլի 7-ին Ս. Գալանյան օրիորդաց դպրոցի դահլիճում հավանություն է ստանում Ընկերության կանոնադրությունը<sup>4</sup>: 1882 թ. մարտի 7-ին Ս. Գալանյան օրիորդների դպրոցի դահլիճում տեղի է ունենում Ընկերության պաշտոնական բացումը և առաջին Ընդհանուր ժողովը<sup>5</sup>:

Ընկերությանն անդամակցում են այդ պահին ներկա բոլոր կանայք: Կանոնադրության համաձայն՝ ժողովն ընտրում է Ընկերության վարչություն: Վարչության առաջին անդամապետների է ընտրվում Սրբուհի Երիցյանը, փոխանդամապետների՝ Մարիամ Խասիսյանը<sup>6</sup>: Վերջինս զանազան պաշտոններ է ունեցել Ընկերության գործունեության սարիներին, 1884-ին ընտրվում է վարչության անդամապետների: Համաձայն կանոնադրության՝ 1886-ին Խասիսյանը թողնում է անդամապետի պաշտոնը, իսկ 1888-ին կրկին ընտրվում է վարչության անդամ, ապա փոխանդամապետների<sup>7</sup>:

1883-ին Ընկերությունը ստանձնում է Թիֆլիսի Ս. Եշան եկեղեցու ծխական իզական դպրոցի առաջնորդությունը և արդեն այդ սարվա հոկտեմբերին սկսում է դպրոցի աշակերտուհիների ընդունելությունը<sup>8</sup>: Տարվա վերջին աշակերտուհիների թիվը 22-ն էր:

*«Թէև Վարչութեան ցանկութիւնն էր, որ հէնց սկզբից ընդունուիէին այնպիսի աղջիկներ, որոնք շատ ու քիչ պատաստուած լինէին, սակայն փորձը ցոյց տուեց, որ այդ բանն անհրաճործելի է: Երբ մտնող աշակերտուհիների մեծ մասը ոչ միայն անձանօթ էր գրագիտութեանը, այլև չէր կարող խօսիլ կամ իւր միտքն արտայայտել ոչ մայրենի լեզուով և ոչ ռուսերէնով: Հարկ եղաւ այդ լեզուների դասերի թիւը աւելացնել ի վնաս ձեռագործութեան և զծագրութեան»<sup>9</sup>:*

Առաջին տասնամյակի ընթացքում Մարիամ Խասիսյանը վարչությունում ծառայել է 8 տարի<sup>10</sup>: Ընկերության

25-ամյակի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ Խասիսյանը 1882-1907 թվականների ընթացքում տասնվեցուկես տարի տարբեր պաշտոններ է զբաղեցրել<sup>11</sup>:

Ինչպես սեղեկանում ենք Ընկերության կանոնադրությունից (բաղ-  
կացած է վեց բաժնից և 35 հոդվածից), այն ունեւր երկու հիմնական  
նպատակ.

1. Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան նպատակն է  
նպաստել իգական սեռի լուսաւորութեանը՝ ա. բանալով ներհոյգրեալ  
կարգովը և պահելով իւր հաշուով իգական սեռի մասնաւոր դպրոցներ  
և բ. իւր ունեցած միջոցներով օժանդակել իգական սեռի ծխական  
դպրոցներին:

2. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը նպաստում է և այն  
անձանց, որոնք կը ցանկան պատրաստուիլ ծխական դպրոցների մէջ  
վարժուհեաց պաշտօն վարելու համար:

Ընկերության կանոնագիրքը սահմանում է, որ իսկական անդամներ կարող  
էին լինել միայն իգական սեռի ներկայացուցիչները, սակայն. «Երկսեռ  
պատույ անդամ են ընտրվում այն անձինքը, որոնք իրանց հասարակական  
դրութեամբ կարող են մի առանձին օգուտ տալ Ընկերութեանը»:

Ինչպես սեղեկանում ենք «Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկե-  
րության» 1907 թվականի մարտի 25-ի ընդհանուր ժողովի արձանա-  
գրությունից, Ընկերությունը քննարկում է նոր կանոնագրի հարցը՝  
կանգ առնելով մասնավորապես դրա անվան և նպատակի վրա: Այսպես՝  
Ընկերությունը պէտք է վերանվանվեր «Կովկասեան Հայուհեաց Բարե-  
գործական Ընկերութիւն», որն «իբր նպատակ պիտի ընդունի՝ տարածել  
արհեստների հետ միասին, անբաժան նաև կրթական գործը»<sup>12</sup>: Սակայն

12 Հաշիւ Թիֆլիսի Հայուհեաց  
Բարեգործական Ընկերութեան.  
բանուվեցերորդ տարի. (1908).  
Թիֆլիս,  
էջ 3-4:

որոշ աղբյուրներ ցույց են տալիս, որ նոր կանոնագիրքը  
հաստատում է միայն 1912 թվականի ապրիլի 19-ի տարեկան  
ընդհանուր ժողովին:

Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերության վարչությունը գոր-  
ծում մասնակցություն էր ունենում քաղաքի հանրային, կրթական,  
սոցիալ-մշակութային կյանքին: Այն ժամանակի մանուլի ուշադրության  
առանցքում էր:

«Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը մեր սակաւաթիվ հայկական  
ընկերութիւններից մէկն է. բացի նրանից մենք ունենք միայն  
Բաբուի Սարդասիրական Ընկերութիւնը, որ ճշուդեր չունի, Հայոց  
Բարեգործական Ընկերութիւնը Կովկասում, որ մօտ քսան փոքր,  
մեծամասամբ շատ չնչին ճշուդեր ունի, և Հայոց Հրատարակչական  
Ընկերութիւնը: ... Համեմատած այն կարիքների հետ, որ ունի հայ-  
կական կեանքը, այդ շատ քիչ է, մանաւանդ որ եղածներն էլ զար-  
մանալի քիչ գործ են կատարում: Եւ ինչ կարող է կատարել այդ  
ընկերութիւնների ունեցած տարեկան եկամուտներով: ... Այժմ, եթէ

մասնավորապես լինենք մեր խոսքը Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերության վերայ, չենք կարող չը վկայել, որ իւր սուղ միջոցներին նա լավագույն գործադրությունն է տեսնել. տեսնելով, որ միջոցներ չունի կանոնադրութեամբ իրեն տրուած իրաւունքները բանեցնել, տարածելով իւր խնամքը շատ ուսումնարանների վերայ և լայն ծաւալով ուրիշ բարեգործութիւններ անել, նա հենց առաջին տարւանից իր բոլոր խնամքը թափել է Թիֆլիսի ծխական ուսումնարաններից մէկի վերայ, հաջողացնելով 1888 թականին բաց անել նաև մի «Կարուձևի և Ձեռագործի» դպրոց, վերջինս նահանգական իշխանութեան թոյլտուութեամբ: ...Այսպիսով մենք տեսնում ենք, որ ընկերութիւնը փոխանակ ցրելով իւր սուղ միջոցները, կենտրոնացրել է իւր գործունեութիւնը, ստեղծելով Հայերիս մէջ չեղած մի օգտակար ուսումնարան, որտեղից անշուշտ կը դուրս գան. 1) մեր օրիորդական ուսումնարանների համար հարկաւոր կարուձևի և ձեռագործի հայ վարժուհիներ 2) կեանքի մէջ անկախ աշխատանքի ընդունակ աղջիկներ և կանայք»<sup>13</sup>:

– 13 Լուսինի. (1892). Հայոց Բարեգործական Ընկերութիւնները ընդհանրապէս և Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը մասնաւորապէս. Մուրճ, 6, 951-958:

– 14 Կարուձևի և ձեռագործի դպրոցը բացվել էր 1888 թվականի սեպտեմբերին:

– 15 Եւսէն տեղում:

Այս հոդվածից և Ընկերության տասնամյակի հաշվետվությունից տեսնում ենք նաև, որ 1890-1891<sup>14</sup> թվականներին Ընկերության կարուձևի և ձեռագործի տնայա դպրոցն ավարտել է 7 աշակերտուհի՝ վարպետուհու օգնականի կոչումով: Աշակերտուհիները տարբեր սոցիալական խավերից և դասակարգերից էին. հեղինակը գրում է, որ շրջանավարտներից 3-ը արհեստավորների դասակարգից էին, 3-ը՝ վաճառականի, և 1-ն էլ ուսուցչի աղջիկ էր: Կարևոր է, որ աշակերտուհիներից յուրաքանչյուրն այս կամ այն կերպ հանրային-բարեգործական, կրթական գործի շարունակողը դարձավ.

«Դրանցից մէկը շուտով իւր սեպիական արհեստանոցը բացեց Թիֆլիսում, մինը պատերներ էր վերցնում՝ տանը կարելու, մէկը Շուրաբի օրիորդաց ծխական դպրոցի ձեռագործութեան վարժուհու պաշտոն էր կատարում՝ Ս. Նշանի դպրոցում, և վերջապէս 3-ը մնացին հենց դպրոցում»<sup>15</sup>:

1907 թվականի ապրիլի 28-ին հանդիսավոր պայմաններում տնվում է Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերության 25-ամյակը: Հասկապէս նշանակալի է Սոգոյնկ ֆաղափի հայ կանանց և օրիորդների շնորհավորական նամակը.

«Ձեր 25-ամյակը ապացուցեց, որ հայ կինը և օրիորդը ևս ընդունակ է գործելու հասարակական ասպարեզում և իր գործունեութեամբ թեթևացնելու իր կարոտ ֆույրերից շատերի դառն վիճակը» (Շատվորյան, 2007):

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ընկերության կանայք իրենց ներուժը ներդնում են հայ կամավորական ջոկատների հանդերձավորման և փախսականների օգնության կազմակերպման գործին: Ցավոք, կանանց կրթության հարցը եսին պլան է մղվում:

Պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունների, ինչպես նաև ֆինանսական վատթար դրության պատճառով Ընկերությունը շուրջ 40 տարվա բեղմնավոր գործունեությունից հետո դադարեցնում է իր գոյությունը 1921 թվականին (Շասվորյան, 2007):

– 16 Մարիամ Խատիսյանի հասարակական գործունեության, ինչպես նաև նրա «Նոր ճանապարհի վրա» վեպի վերլուծությունը տես Rowe, V. (2003). *A History of Armenian Women's Writing: 1880-1922*. London. Cambridge Scholars Press Ltd, pp. 91-149: Կենսագրական և հասարակական գործունեությանն առնչվող նկարագրությունները տես նաև Հարությունյան, Ա. (2005). *Երևելի տիկնանց դարը: Հայ կանանց հասարակական գործունեությունը XIX դարում և XX դարասկզբին*. Երևան. Հոգևոր Հայաստան: Խատիսյանի գրական ժառանգության և «Կնոջ խնդրի» նրա ըմբռնման վերլուծությունը տես Մանուկյան, Ա (2019). «Կնոջ խնդրի» սկզբնավորումը 19-րդ դարի ռուսահայ գրականության էջերում. Անդրեասյան և այլք (խմբ.). *Սեռականությունը հայկական [համա] տեքստերում*. Երևան. «Սոցիոսկոպ» ՅԿ:

– 17 Կեպը տպագրվել է Մուրճ ամսագրի (որին աշխատակցում էր Խատիսյանը) 1890 թվականի համարներում, իսկ 1891-ին և 1892-ին հրատարակվել է երկու մասից բաղկացած առանձին գրքերով: Իր այս առաջին ստեղծագործությունը Մարիամ Խատիսյանը ստորագրել է «Տիկին Մ. Մարիսեան» ծնողական ազգանվամբ: Մուրճի 1889 թվականի 6-րդ համարի նամակագրության բաժինը հայտնում էր, որ խմբագրությունը սպասում է տիկին Խատիսյանի «Նինա» վեպի ձեռագրին, իսկ արդեն 1890 թվականի 6-րդ համարում կարդում ենք, որ «Նինան» տպագրվել է «Յեղիներ» վերնագրով: Համաձայն Խատիսյանի կենսագրության՝ նա ունեցել է չորս որդի և մեկ դուստր՝ Նինա անունով: Եթե որդիների մասին տեղեկությունը հասանելի է (Կոնստանդին Խատիսյան, Ալեքսանդր Խատիսյան, Գևորգ Խատիսյան (Հ. Թումանյանի դուստր Աշխենի ամուսինը), Լևոն Խատիսյան), ապա դստեր մասին այս ուսումնասիրության շրջանակում դեռևս չենք հաջողել տեղեկություն հայթայթել:

Թիֆլիսի հայուհյաց բարեգործական ընկերության հիմնադիր, ինչպես նաև անդամ կանայք հիմնականում միջին և բարձր խավից էին և գրական-հասարակական ասպարեզում ակտիվ գործունեություն էին ծավալում, նրանք միաժամանակ թե՛ գրվածքների հեղինակներ էին, թե՛ սոցիալական ռեֆորմիստներ: Սոցիալական ռեֆորմներին մասնակցությունը սեղի ուներ գլխավորապես երեխաների դաստիարակության և կրթության գործն առաջ մղելու միջոցով. կանայք վարժապետուհիներ էին, դասագրքերի հեղինակներ, խնամասարներ, ակումբների անդամներ և հիմնադիրներ:

Բացի աղջիկների դաստիարակչական և կրթական գործին աջակցելուց՝ շատ բարեգործական ընկերություններ ուղղակիորեն խթանում էին կանանց գրական երևակայությունը՝ հրատարակելով նրանց գեղավեսական գործերն ու դպրոցական դասագրքերը (Rowe, 2003): Մրավառ օրինակներից է Մարիամ Խատիսյանի «Դժբախտ կին» (1899) վեպը, որ հրատարակվել է «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության» անմիջական աջակցությամբ (Rowe, 2003):

Մարիամ Խատիսյանը (1845–1914)<sup>16</sup>՝ այսօր մեծապես մոռացված արևելահայ կին գրողն ու հասարակական գործիչը, գրել է և հրատարակել չորս վեպ՝ «Յեղիներ»<sup>17</sup> (1891 (մաս 1), 1892 (մաս 2)), «Փեսա որսողներ» (1894), «Նոր ճանապարհի վրա» (1894) և «Դժբախտ կին» (1899):

Խատիսյանի վեպերն անդրադառնում են Թիֆլիսի միջին և բարձր խավի կանանց իրավական, ամուսնական, կրթական, սոցիալական հիմնահարցերին՝ բացելով «Կնոջ խնդրի» բազմակողմանի հեռանկար 19-րդ դարի արևելահայ գրա-

– 18 թեև Խատիսյանի կանայք երբեմն դատողություններ են անում տղամարդու և նրա «եության» մասին, հարցադրում են կամ փորձում զանցառել տղամարդկային կարգը, այդուհանդերձ, նրա ստեղծագործությունների և «կնոջ խնդրի» նրա ըմբռնման վրա մեծ է լուսավորականության հայրերի ազդեցությունը, ինչը հատկապես տեսանելի է Խատիսյանի՝ կանանց հասարակական կամ ազգային գործին նվիրելու մեծ ձգտման մեջ: Իր գրական և հասարակական-բարեգործական գործունեությամբ Խատիսյանն ինքը այդ լուսավորական նախագծի հետևողական իրացնողն է: Շարունակելով լուսավորիչ տղամարդկանց ավանդույթը՝ ինչպես կանանց կրթությունը, այնպես էլ ամուսնությունը Խատիսյանի համար նախևառաջ ազգի բաղաբաղաբաղման լուսավորական նախագծի մասն է (Մանուկյան, 2019):

կանություն մեջ (Մանուկյան, 2019): Խատիսյանի վեպերի միջոցով հաղորդակից ենք դառնում թիֆլիսաբնակ միջին և բարձր խավի կանանց իրավական, ամուսնական, կրթական, սոցիալական խնդիրներին, և լայն առումով՝ տղամարդակենտրոն, հայրիշխանական հասարակարգին<sup>18</sup>: Իր «Չայ գրողը *հնադասուխան առաջ*» հրապարակախոսական հոդվածում Խատիսյանը դասողություններ է անում իր ժամանակաշրջանին բնորոշ գրաֆնադասության բնույթի և գրաֆնադասների շուրջ:

*«Ինչու՞ն է կայանում հայ կրիտիկոսների շարժումը: Նորանում, որ նոքա հեղինակից պահանջում են իդեալ – լուսավոր թե խալար, բայց և այնպես անպատճառ իդեալ: Նոքա հարկավոր չէ և նոյն իսկ հասկանալի չէ կեանքի հասարակ մարդը, բազմաթիւ դիմագծերով, – նոքա հարկավոր է իդեալ – դրական կամ բացասական» (Մուրճ, 1895: 11, 1462–1472):*

Այս կերպ Խատիսյանն անդրադառնում է դեռևս 1893-ին Մուրճի 7-8-րդ համարում հրատարակված իր «Չեղին» վեպի ֆնադասությանը, որտեղ հոդվածի հեղինակը մեղադրում է Խատիսյանին, թե վեպի հերոսուհին ոչ թե հասարակ խավից է, այլ բարձր դասակարգից: Խատիսյանն անդրադառնում է նաև *Տարագում* հրատարակված իր մեկ այլ՝ «Փեսա որսողներ» վեպի ֆնադասությանը:

Չեքսաբրերական է նաև *Մուրճի* հիմնադիր խմբագիր Ավետիս Կրասխանյանի ծավալուն ծանոթագրությունը, որտեղ տղամարդկանց այդֆան բնորոշ բացասական ոճով ֆնադասում է Խատիսյանի պատասխանը գրախոսին՝ մեղադրելով նրա համար, թե Խատիսյանը չի ըմբռնել ֆնադասության էությունը և սխալ դասողություններ է անում ինչպես ժամանակի ֆնադասության ոգու, այնպես էլ իր վեպի ֆնադասության շուրջ: Այսպիսով՝ Խատիսյանն ունեցել է ինչպես նշանակալի գրական-հրապարակախոսական, այնպես էլ հանրային-բարեգործական ավանդ արևելահայ իրականության մեջ:

Թիֆլիսի (Կովկասի) հայուհյաց բարեգործական ընկերությունում նրա և այլ մտավորական կանանց երկարամյա գործունեությունը խթանել է հայ կնոջ կրթությունն ու ազատագրությունն Արևելահայաստանում: Ընկերության և դրա հիմնադիր կանանց գործունեությունը ոգևորել է այլ կանանց՝ ստեղծելու այլ ընկերություններ կամ մասնաճյուղեր՝ այդ կերպ հնարավորություն ընձեռելով կանանց ներգրավվելու հանրային կյանքի զանազան ոլորտներում:




Խասիսյանի գրական-հանրային ավանդը նշանավորելու համար 1914 թվականի փետրվարի 27-ին Հովհաննես Թումանյանը հրավիրում է «Հայ գրողների կովկասյան ընկերության հասուկ նիստ»։ Ելույթներ են ունենում Սոֆիա Դանիելբեկյանը (Սոֆիա Դանիել Բեկ), Լեոն, Մինաս Բերբերյանը և այլք։ Իր ելույթով Սոֆիա Դանիել Բեկը<sup>19</sup> դասողությամբ յուրաներ է անում «Կնոջ խնդրի» շուրջ։

*«Ճշմարտութիւն է, հասարակութեան մէջ ամեն մի կուլտուրական երեւոյթ զարգանում, հասունանում է, երբ նրա մէջ մասնակցութիւն ունեն նրա բոլոր արրերը: Իսկ որովհետև կինն էլ կազմում է հասարակութեան մի արրը, հետևապէս ևս դեր ունեցել է ներկայ կուլտուրայի զարգացման մէջ: Մինչև այժմ կինը թէ մտնու և թէ շրջանով սահմանափակ է եղել, և այդ բանը յաճախ խնդարել է հասարակական յառաջադիմութեան: Սակայն այդ սահմանափակումը և հին նախապաշարունները ներկայումս մասամբ վերացած են, և կնոջ իրական դրութեան մէջ որոշ բարեփոխում է առաջացել»<sup>20</sup>:*

19. Մուրճ ամսագրում (1906: 6, 33-65) հրատարակել է «Կանանց հարցը և նրա ծագելու պատճառները» հրապարակահոսական ծավալուն հոդվածը:

20. Հայ գրողների կովկասյան ընկերության երեկոյթները (31-րդ երեկոյթ, փետրվարի 27-ին). Հորիզոն, 1914: 46, 4-5:



1914 թվականի գործի փետրվարի 25-ի առաջին համարում հրապարակվում է Խասիսյանի մահախոսականը. «Մարիամ Խասիսյան, կովկասահայ առաջին վիպասանուհին, ծնուել է օսարախօս ընտանիքում և իր կամքի ոյժով սովորել է մայրենի լեզուն: Ութսունական թուականներին Թիֆլիսի հայ կանանց շրջանում բաւական աչֆի ընկնող դեր էր կատարում հանգուցեալը: Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան հիմնադիրներից է, որին նախագահել է բաւական արիներ: Հայսնի էր իբրև ինստիտուցիոն կին և իբրև հասարակական գործիչ: Հայսնի է մանաւանդ իր վեպերով – «Հեղինէ», «Նոր ճանապարհի վրայ», «Փեսայ որսողներ», «Գժբախտ կին» – որոնց մէջ արծարծում էր հայ կնոջ ազատագրման խնդիրը և ուր ներկայացնում էր ութսունական թուականների մեր մտայնականութեան կեանքը»:

# Գրականություն և աղբյուրներ

1. Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան  
ֆսանեիհիմագամեակը: 1882-1907. (1907). Թիֆլիզ:
2. Լեո. (1911). *Երեսնամեակ Հայոց Բարեգործական Ընկերութեան  
Կովկասում. 1881-1911.* Թիֆլիս:
3. Հաշիւ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան.  
*Բանուկեցերորդ տարի.* (1908). Թիֆլիս:
4. Հարությունյան, Ս. (2005). Երևելի տիկնանց դարը: Հայ կանանց  
հասարակական գործունեությունը XIX դարում և XX դարասկզբին.  
Երևան. Հոգևոր Հայաստան:
5. Մանուսյան, Ս. (2019). «Կնոջ խնդրի» սկզբնավորումը 19-րդ  
դարի ռուսահայ գրականության էջերում. Անդրեսայան և այլք  
(խմբ.). *Մեռականությունը հայկական [համա]սեֆսերում.* Երևան.  
«Սոցիոսկոպ» ՀԿ:
6. Ծասվորյան, Յ. (2007). *Թիֆլիսի հայ բարեգործական  
հաստատությունների պատմությունից. 19-րդ դարի վերջ-20-րդ  
դարի սկիզբ.* Երևան. ՀՀ ԳԱԱ պատմ. ինստիտուտ:
7. Տասնամեակ Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան.  
(1892). Թիֆլիզ:
8. Rowe, V. (2003). *A History of Armenian Women's Writing:  
1880-1922.* London. Cambridge Scholars Press Ltd.

Նորին պայծառափայլ լուծիւն պաշտօնակատարն Փոխարքայի  
այս Կանոնագրութիւնը բարեհաճեցաւ հաստատել :  
Ստորագրեց Պետն Գլխաւոր Վարչութեան Գեներալ-  
Լէյտենանտ ՍՏՄՐՕՍԷԼՍԿԻ :

31 դեկտեմբերի 1881 ամի :  
Թիֆլիզ :

21 Կանոնագիրը թվայնացրել է հեղինակը՝ ըստ  
«Կանոնագրութիւն Յայուհեաց Բարեգործական  
Ընկերութեան», (1882). Թիֆլիզ :  
Կանոնագրութիւնը երկնագույն է՝ ռուսերեն  
և հայերեն: Թվայնացվել է միայն հայերեն  
հատվածը:

## ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՅՈՒՅԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՉՈՒԲՍ<sup>21</sup>

### I. ՆՊԱՏԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ .

§ 1. Թիֆլիսի Յայուհեաց Բարեգործական Ընկերութեան նպատակն է  
նպաստել իգական սեռի լուսաւորութեանը՝ ա. բանալով ներքոյ գրեալ  
կարգովը և պահելով իւր հաշուով իգական սեռի մասնաւոր դպրոցներ  
և բ. իւր ունեցած միջոցներով օժանդակել իգական սեռի ծխական  
դպրոցներին :

§ 2. Յայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը նպաստում է և այն  
անձանց, որոնք կը ցանկան պատրաստուիլ ծխական դպրոցների մէջ  
վարժուիեաց պաշտօն վարելու համար :

### II. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՆ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ .

§ 3. Ընկերութիւն կազմողներն են՝ իսկական, մշտնջենաւոր եւ  
պատուոյ անդամներ : Անդամների թիւը սահմանափակուած չէ :

§ 4. Ընկերութեան հասոյթը կայացնում են՝

ա. Յամաձայն սոյն Կանոնագրութեան § 6 և 7 իսկական և  
մշտնջենաւոր անդամների տարեկան և միանուագ վճարները :

բ. Այլևայլ անձանց, եկեղեցեաց և վանօրէից ընծայաբերութիւնները  
-- դրամ, զոյժ և կամ դպրոցական ձեռնարկներ :

գ. Յամաձայն եղած կանոնագրութեանց՝ Ընկերութեան տուած  
պարահանդէսներից, ներկայացումներից և դասախօսութիւններից  
զոյացած գումարը :

և դ. Այն գումարը, որ կը կայանայ Ընկերութեան նուիրած, բայց  
դպրոցական գործածութեան համար անյարմար դատուած իրեղէնների  
վաճառելուց :

§ 5. Ընկերապատկան գումարները պահվում են Թիֆլիզի բանկերից մեկում յանույն Ընկերութեան և յէտ կարող են առնուիլ միմիայն Ընկերութեան Վարչութեան որոշմամբ:

*Ծանօթութիւն. Ընթացիկ ծախսերի համար գանձապահը կարող է իւր մօտ ունենալ մինչեւ 50 ռ.*

### III. ԱՆԴՍՍԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ՆՈՑՎ ԻՐՎՈՒՄՔՆԵՐԸ ԵՒ ՊՐՏՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

§ 6. Իսկական անդամ լինում են միմիայն իգական սեռից և վճարում են տարեկան առնուազն 6 ռուբլի:

§ 7. Իգական սեռից առնուազն 100 ռուբլի վճարողները համարվում են Ընկերութեան մշտական անդամ:

§ 8. Երկսեռ պատույն անդամ են ընտրվում այն անձինքը, որոնք իրանց հասարակական դրութեամբ կարող են մի առանձին օգուտ տալ Ընկերութեանը:

§ 9. Իգական և մշտական անդամներին հաստատում է Վարչութիւնը, իսկ պատույն անդամները ընտրվում են Ընդհանուր Ժողովի ձեռնով:

§ 10. ԲՎՐԶՐ ՍՐԲՎՉՎՆ ՏԵՂՈՂՅԱ Վիճակաւոր Առաջնորդը Ընկերութեան Պատուաւոր Նախագահն է և նախագահում է, երբ միայն ներկայ է գտնվում Ընդհանուր Ժողովի և Վարչութեան նիստերում:

### IV. ԸՆԿԵՐՈՒԹԵՎՆ ՎՐԶՈՒԹԻՒՆԸ.

§ 11. Ընկերութեան գործեր կառավարողն է Վարչութիւնը, որ կայանում է եօթն անձերից, ընտրուած պատույն իգական սեռի, իսկական և մշտական անդամներից: Վարչութիւնը ինքն իւր միջից ընտրում է ասեճապետուհի, փոխասեճապետուհի, ասեճադպիր և գանձապահ:

§ 12. Թէ Վարչութեան անդամներին և թէ նոցա եօթը կանդիդատներին ընտրում է Ընկերութեան Ընդհանուր Ժողովը գաղտնի քուէարկութեամբ՝ չորս տարի ժամանակաւ: Առաջին երկու տարին լրանալուց յետոյ վիճակարկութեամբ թողնում են Վարչութիւնը և փոխարինում են երեց կանդիդատ անդամներից երեքը: Իսկ յետագայ երկու տարուանից յետոյ հետնում են և միւս անդամները:

*Ծանօթութիւն. Վարչութիւնից հեռացած անդամները վերընտրելի են միայն երկու տարուց յետոյ:*

§ 13. Եթէ Վարչութեան որևիցէ անդամը հեռանայ պայմանադրեալ ժամանակից առաջ, և կամ երկարատև հիւանդութիւն ունենայ կամ թէ բացակայ գտնուի ֆաղափից, նորա տեղը անցնում է աւելի ֆուէ ունեցող կանգնիտանը:

§ 14. Վարչութիւնը ժողովվում է ըստ պահանջման հարկին և ըստ հրաւիրման ասենապետուհիոյ: Վարչութիւնը արձանագրում է իւր նիստերը, որ վաւերացնվում է ներկայ եղող անդամների ստորագրութեամբ:

§ 15. Վարչութեան մէջ բոլոր գործերը վճռվում են ձայների պարզ առաւելութեամբ: Իսկ ձայների հաւասարութեան դեպքում նախագահի կողմը նախապահիւ է համարվում: Վարչութեան մէջ կայացած վճիռների օրինաւորութեան համար հարկաւոր է անդամներից չորսի ներկայութիւնը:

§ 16. Վարչութեան պարտաւորութիւններն են՝

ա. Վշխասել Ընկերութեան անդամների թիւը և դրամական միջոցները աճեցնել:

բ. Հսկել և օգնել այն դպրոցների բարելաւութեանը, որոնք կամ նպաստ են ստանում Ընկերութիւնից և կամ Ընկերութեան հաշուով են պահվում:

գ. Ընկերութեան դրամների և գոյքերի ամբողջութեանը հսկել:

և դ. Պատասխանել Ընկերութեան տարեկան գործունեության հաշիւն ու ապագայ տարուայ հաշուեկշիռը և ներկայացնել այդ բոլորը Ընդհանուր ժողովին:

§ 17. Վարչութիւնը իրաւունք ունի՝

ա. Թէ դրամով և թէ գոյքերով օգնել բոլոր հայ ծխական դպրոցներին համաձայն հաստատուած հաշուեկշիռին. իսկ հաշուեկշիռից դուրս մինչև 500 ռուբլի տարէնը:

բ. Ընտրել իսկական և մշտական անդամներ:

և դ. Հարկ եղած Իշխանութեան թոյլտուութեամբ՝ յօգուտ Ընկերութեան կազմել նուագահանդէսներ, ներկայացումներ, պարահանդէսներ, դասախօսութիւններ և այլն:

§ 18. Վարչութեան ասենապետուհին պէտք է հսկէ, որ ճշտութեամբ կատարուին թէ սոյն Կանոնագիրը և թէ Ընդհանուր ժողովի և Վարչութեան վճիռները: Ասենապետուհիոյ կողմից են լինում բոլոր բանակցութիւնները որևիցէ հաստատութեանց և անձանց հետ:

§ 19. Ասեճապեսուիիըն է ճշաճակուի սուվորակաճ և սարեկաճ Ըճդիհաճուր ժողովճերը:

§ 20. Ասեճապեսուիիոյ բաջակաշուիթեաճը, ճորա իրաուոճճճերը և պարսաուորուիիճճերը աճճճուի եճ փոխասեճապեսուիիոյճ:

§ 21. Ասեճադափրը արճաճագրուի է Ըճդիհաճուր ժողովի և Վարշուիթեաճ ճիսերը: Նա վարուի է ըճդիհաճրապէս դիւաճը, պահուի է դիւաճասաճ գրուիիճճերը և Ըճկերուիթեաճ կճճիբը:

§ 22. Տարեկաճ Ըճդիհաճուր ժողովիճ ճերկաշաջճեկուի հաճար ասեճադափրը պարսասուի է ըճդիհաճուր հաշիւ Ըճկերուիթեաճ լրաջաճ սարուաշ կարգադրուիթեաճճ, կաշիբ և դրուիթեաճ մասիճ, ճալ մի սեսուիիիճ սպազաշ եճթադրեկիբ գորճուիեուիթեաճ և սպասեկիբ մուսբ ու եկիբ մասիճ:

§ 23. Ասեճադափրիճ վարճ է ճշաճակվուի Ըճդիհաճուր ժողովի առաճճիճ վճոոյճ հաճեմաս: *Ծաճոթուիիճ. Վարշուիթիճը կարող է հարկաուոր եղաճ ժամաճակ որևիջե սղամարդի հրաւիրեկ ասեճադափրի պաշսոճը վարեկու հաճար, առաճճ ճաշճի իրաուոճճ սալու ճրաճ իւր ճիսերի մեջ:*

§ 24. Գաճճապահը պահուի է ըճկերուիթեաճ դրամակաճ գորճերը և հաշիւճերը: Նա ըճդուիճուի է բոլոր սարեկաճ վճարճերճ ու ճուերճերը և ճախսեր է աճուի Վարշուիթեաճ կարգադրուիթեաճը:

#### V. ԸՆԴՀԱՆՈՒԲ ԺՈՂՈՎ.

§ 25. Ըճդիհաճուր ժողովճերը լիճուի եճ սուվորակաճ և սարեկաճ:

§ 26. Սուվորակաճ ժողովճերը հրաւիրվուի եճ կաճ ըս պահաճճմաճ հարկի, առ ճուազճ սարեճը երկու աճզաճ, Վարշուիթեաճ որոշմաճը, և կաճ երբ առ ճուազճ բաճ աճդամճերի ստորագրուիթեաճը գրաուոր առաջարկուիթիւճ կը լիճի Վարշուիթեաճը: Ըճդիհաճուր ժողովի կաշաճալու որուաշ մասիճ պիսի հրասարակուիի սեղակաճ լրագիբճերուի որով առաջ:

§ 27. Ըճդիհաճուր ժողովը կաշաջաճ է հաճարվուի, երբ ճերկաշ եղող աճդամճերի թիւը պակաս շե բաճ  $\frac{1}{4}$  Թիֆլիզուի բճակուող աճդամճերիջ:

*Ծաճոթուիիճ. Եթե Ըճդիհաճուր ժողովը շկաշաճաշ որոշեալ թիւ աճդամ ճերկաշ շզճուեկուի պարճառով, աշճ ժամաճակ հրաւիրվուի է ոշ պակաս բաճ եթեճ որիջ յեոոյ, երկրորդ ժողովը և աշս մասիճ հրասարակվուի է ոշ ուշ բաճ թե երրորդ որը շկաշաջաճ ժողովիջ յեոոյ: Վյդափիսի ճիսերը որիճաուոր եճ, եթե միաշճ ճերկաշ շզճուիճ ոշ պակաս բաճ  $\frac{1}{6}$  մասը Թիֆլիզաբճակ աճդամճերի, ի թիւս որոոջ հաշուեկուի է և Վարշուիթեաճ աճդամճերիճ:*

§ 28. Ընդհանուր ժողովի մեջ Վարչութեան անդամները միւս անդամների հետ հաւասար ձայն ունին:

§ 29. Տարեկան Ընդհանուր ժողովները հրաւիրվում են ամեն տարի փետրվարի սկզբում քննելու և հաստատելու՝ ա. տարեկան հաշիւները և ընկերութեան մուսֆն ու ելֆը. բ. Վարչութեան անդամներ ընտրելու համար, և գ. Վարչութեան կամ անդամների առաջարկութիւնները քննելու և հաստատելու համար, նաև նորանոր դպրոցների բացուելու կամ եղածները գոցելու մասին, և կամ վերջապէս Ընկերութեան անշարժ կայքերի առնելու և ծախելու ենթադրութեանց մասին:

§ 30. Ընկերութեան տարեկան հաշիւները տպոււմ են տեղական լրագիրներից մէկում և երկու օրինակ (ռուսերէն գրած) ներկայացվում են Թիֆլիզի Նահանգապետին և մի օրինակ Փոխարքայի Գլխաւոր Վարչութեանը:

#### VI. ԸՆԿԵՐՈՒԹԵՎՆ ԻՐՎԷՆԻՆՔՆԵՐԸ.


§ 31. Ընկերութիւնն իրաւունք ունէ գնել և ծախել շարժական և անշարժ կայքերը, կապել պայմանագրութիւններ, բանալ դաս և պաշտպանել իւր շահերը Վարչութեան և կամ առանձին անձանց ձեռնով:

§ 32. Ընկերութիւնն իրաւունք ունէ բանալ իւր հաշուով իգական սեռի ուսումնարաններ, համաձայն այդպիսի ուսումնարանների վերաբերմամբ եղած ընդհանուր կանոնների, և տեղական ուսումնարանական Վարչութեան պատշաճաւոր թոյլտուութեամբ:

§ 33. Որպէս զի Ընկերութիւնը Թիֆլիզից դուրս ևս յաջողութեամբ հասնէ իւր նպատակներին, Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը կարողէ դիմել այլ, բայց նոյնպէս դպրոցական մանկավարժական նպատակներին ծառայող, Ընկերութեանց օգնութեանը և իւր կողմից կարողէ նոցա դրամական օժանդակութիւն տալ:

§ 34. Ընկերութիւնը ունէ իւր կնիքը իւր անունով:

§ 35. Եթէ որ և իցէ պատճառով Ընկերութիւնը ընդհատէ իւր գործունէութիւնը, այն ժամանակ նորա բոլոր առ երես ունեցած գոյքը և կայքը անցնում է յօգուտ որ և իցէ բարեգործական գործի, ըստ որոշման Ընդհանուր ժողովի:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԿԱՆԱՆՑ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Հետազոտությունն իրականացվել է «Հայաստանում կանանց հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ: Դրանում արժանացված կարծիքները պատկանում են հեղինակին և կարող են չհամընկնել «Հայաստանում կանանց հիմնադրամի» ղեկավարների հետ: